ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2023թ. թիվ 70-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի
ԹԻՎ 721-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 5)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին և 2)-րդ կետերով, 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի թիվ 737-Ն որոշման թիվ 1 հավելվածի 80-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2023 թվականի փետրվարի 15-ի թիվ 119 հրամանը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ Լոռու մարզպետարանի հաստիքացուցակը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 332-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 721-Ա որոշման հավելվածի՝

1) «1.2. Քաղաքաշինության վարչություն» մասում 3-րդ տողը հանել և «Ընդամենը» տողում «9» թիվը փոխարինել «8» թվով,

2) «1.6. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն» մասում ավելացնել հետևյալ տողը՝

7	Խորհրդական	1

և «Ընդամենը» տողում «7» թիվը փոխարինել «8» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

15/02/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. փետրվարի 15
ք.Վանաձոր